

Գումարման ստուգումը հանումով

Գումարելի	+	Գումարելի	=	Գումար
-----------	---	-----------	---	--------

4156	+	123	=	4279
------	---	-----	---	------

Գումարման ճշտությունը կարելի է ստուգել հանումով:

- Եթե գումարից հանենք գումարելիներից որևէ մեկը և ստանաք մյուս գումարելին, ապա գումարման գործողությունը ճիշտ է կատարված, իսկ եթե ոչ, ապա սխալ է:

Օրինակ՝ $4156 + 123 = 4279$

+	4	1	5	6		Ստուգում	-	4	2	7	9			
		1	2	3					1	2	3			
	<u>4</u>	<u>2</u>	<u>7</u>	<u>9</u>				<u>4</u>	<u>1</u>	<u>5</u>	<u>6</u>			

- Հանումով ստուգի՛ր՝ ճիշտ է արդյոք կատարվել գումարումը:

Օրինակ՝ $3695 + 6984 = 10679$, ճիշտ է:

Ստուգում՝

-	1	0	6	7	9	
		6	9	8	4	
	<u>3</u>	<u>6</u>	<u>9</u>	<u>5</u>		

Առաջադրանքներ

1. Կատարենք գումարում և այն ստուգենք հանումով՝

$1549+6995=$

$3286+7529=$

$6023+8705=$

$123+5962=$

2. Հանումով ստուգի՛ր՝ ճիշտ է արդյոք կատարվել գումարումը:

Օրինակ՝ $3695+6984=10679$: Ճիշտ է :

Ստուգում՝

-	1՝	0՝	6՝	7	9	
		6	9	8	4	
		3	6	9	5	

$1567+1299=2866$

$1236+9995=13569$

$1295+369=1664$

$1569+984=2569$

3. Գտիր անհայտ գումարելին.

Օրինակ՝

$\square + 2409 = 6695$

-	6	6	9'	5				
	2	4	0	9				
	4	2	8	6				

